ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՌԵԿՏՈՐ

ՀՐԱՄԱՆ
ԹԻՎ 047/2019-Ա

ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՓՈՐՁԱՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՐՁԱՇՐՋԱՆԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

22.05.2019թ. ք. Երևան

Ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 23-րդ հոդվածով, 24-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, հիմք ընդունելով ««Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության՝ դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման 2019թ. ուսուցման ծրագիրը հաստատելու մասին» Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի 25.01.2019 թ. ԿԽ-001/19/4 որոշման հավելվածը, «Ակադեմիայի ունկնդիրների փորձաշրջանի և Ակադեմիայում քննությունների անցակացման կարգերը հաստատելու մասին» Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի 15.02.2019թ. ԿԽ-002/19 որոշման հավելված 1-ը, «Արդարադատության ակադեմիայում 2019թ. ուսումնական տարվա ընթացքում մասնագիտական պատրաստում անցնող դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց փորձաշրջանի հիմնական ղեկավարների և փոխարինողների ցանկը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 29.03.2019թ. թիվ 64-Ա հրամանը՝

Հրամայում եմ

1. Հաստատել դատախազների թեկնածությունների 2019 թ. ցուցակում ընդգրկված անձանց բաշխումն ըստ փորձաշրջանի ղեկավարների՝ համաձայն Հավելված 1-ի:
2. Հաստատել դատախազների թեկնածությունների 2019 թ. ցուցակում ընդգրկված անձանց փորձաշրջանի անհատական ծրագիրը՝ համաձայն Հավելված 2-ի:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ռեկտոր՝ **Ս. Առաքելյան**